ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ք. Վարդենիս, Հեռ. (0269) 2 2031

N 2
*08 հունվար 2013թ.*

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Վարդենիսի քաղաքային համայնքի ավագանու 2012թ. դեկտեմբերի 27-ի հերթական 2-րդ նիստի N90-Ա, N91-Ն, N92-Ն, N93-Ա, N94-Ա և N95-Ա որոշումներն ու հավելվածները:
Առդիր 20 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վալոդյա Խլոյան

*Կատ. ֆինանսատնտեսական բաժնի պետ՝ Ռ. Խլոյան*

15 01 2013թ
138-13

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք*
*ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269) 2 2031 vardenismer@mail.ru*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2012թվականի N 95-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ>> ԲԲԸ-ԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, Համայանքի ավագանու կողմից գույքահարկի արտոնություններ սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012թ. հոքւնիսի 22-ի N822-Ն որոշմամբ և նկատի ունենալով <<Վարդենիսի Կարի ֆաբրիկա>> ԲԲԸ խորհրդի նախագահ Տ. Խաչատրյանի 10.12.2012թ. դիմումը՝ համայնքի ավագանին որոշում է.

Զիջել <<Վարդենիսի Կարի ֆաբրիկա>> ԲԲԸ-ի (ՀՎՀՀ-08800644) Վ. Համբարձումյան փողոցի 12 փակուղի թիվ 2 հասցեում գտնվող անշարժ գույքի գույքահարկը՝ 93261ՀՀդրամ և գույքահարկի տույժը 64739 ՀՀ դրամ:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՐԱՆՈՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
3. ԽԼՈՅԱՆ ԳԵՂԱՄ
4. ԽՉԵՅԱՆ ԳՐԻՇԱ
5. ՄԱԼՈՅԱՆ ՀԱՅԿԱԶ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՏԱԿ
7. ՇՀՈՅԱՆ ԶԱՎԵՆ
8. ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱՐՈՆ
9. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՅԿ
10. ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ
11. ՄԱՐԳՍՅԱՆ ԱՏՈՄ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՄՈՒԷԼ
13. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼՈԴՅԱ ԽԼՈՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

*Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք*
*ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269) 2 2031 vardenismer@mail.ru*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2012թվականի N 94-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ՎԱՐԴԵՆԻՍԻ ԿՈՄԻՏԱՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՈՒՄ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի <<ը>> կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով <<Վարդենիսի թիվ 1 մանկական երաժշտական դպրոց>>, <<Վարդենիսի թիվ 2 մանկական երաժշտական դպրոց>> <<Վարդենիսի Կոմիտաս Կարապետյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց>>, <<Վարդենիսի թիվ 1 մանկապարտեզ>>, <<Վարդենիսի թիվ 2 մանկապարտեզ>> և <<Վարդենիսի թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ների կանոնադրության 5-րդ և 6-րդ կետերի դրույթները՝ համայնքի ավագանին որոշում է.

1. <<Վարդենիսի թիվ 1 մանկական երաժշտական դպրոց>>, <<Վարդենիսի թիվ 2 մանկական երաժշտական դպրոց>>, <<Վարդենիսի թիվ 1 մանկապարտեզ>>, <<Վարդենիսի թիվ 2 մանկապարտեզ>> և <<Վարդենիսի թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ներ հաճախող երեխաների ծնողական վճարները ամսեկան սահմանել 3000 ՀՀ դրամ:

2. <<Վարդենիսի Կոմիտաս Կարապետյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ հաճախող երեխաների ծնողական վճարները ամսեկան սահմանել 1500 ՀՀ դրամ:

3.Սահմանել ծնողական վճարների հետևյալ արտոնությունները՝

1) Միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներին:

2) Մեկ ընտանիքից նույն կազմակերպություն հաճախող 3-րդ երեխայից սկսած:

3) Նույն կազմակերպությունում դասավանդող ուսուցիչների երեխաներին:

4) Մանկուց հաշմանդամ երեխաներին:

5) Արցախյան ազատամարտի 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամների երեխաներին:

4 Ուժը կորցրած ճանաչել Վարդենիսի քաղաքային համայնքի ավագանու 14 հոկտեմբերի 2009 թվականի<<Վարդենիսի քաղաքային համայնքի ենթակայության <<Մանկական երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ - ներում, <<Մանկական գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ -ում և <<Մանկապարտեզ>> ՀՈԱԿ - ներում ծնողական վճարների չափի և ծնողական վճարների զիջման արտոնությունների մասին>> N 80-Ա որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -14

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՐԱՆՈՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ԽԼՈՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ԽՉԵՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ՄԱԼՈՅԱՆ ՀԱՅԿԱԶ
7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՏԱԿ
8. ՇՀՈՅԱՆ ՋԱՎԵՆ
9. ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱՐՈՆ
10. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՅԿ
11. ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՏՈՄ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՄՈՒՆ
14. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱԼՈԴՅԱ ԽԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք*
*ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269) 2 2031 vardenismer@mail.ru*


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2012թվականի N 93-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼ ԽԱՉԱՏՈՒՐ ՌՈՒԲԵՆԻ ՇԱԲՈՅԱՆԻ ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

Ռւղերձով դիմել ՀՀ Նախագահին՝ Խաչատուր Ռուբենի Շաբոյանի նկատմամբ կիրառել ներում, հնարավոր սահմաններում բավարարվել կրած պատժաչափով:

Կողմ -14

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՐԱՆՈՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ԽԼՈՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ԽՉԵՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ՄԱԼՈՅԱՆ ՀԱՅԿԱԶ
7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՏԱԿ
8. ՇՀՈՅԱՆ ՋԱՎԵՆ
9. ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱՐՈՆ
10. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՅԿ
11. ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՏՈՄ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՍՈՒՆ
14. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

Կ.Տ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱԼՈԴՅԱ ԽԼՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք*
*ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269) 2 2031 vardenismer@mail.ru*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2012թվականի N 92-Ն

## 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով, 32-րդ հոդվածի 5-րդ կետով, << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Վարդենիսի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N1 հավելվածի:

2. Հաստատել Վարդենիսի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Հաստատել Վարդենիսի քաղաքային համայնքի համայնքային բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 3 հավելվածի:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:
5. 2013 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել Վարդենիսի քաղաքային համայնքի ավագանու 2012թ նոյեմբերի 23 -ի <<ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 79-Ն որոշումը:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՐԱՆՈՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ԽԼՈՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ԽՉԵՅԱՆ ԳՐԻՇԱ

6. ՄԱԼՈՅԱՆ ՀԱՅԿԱԶ

7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՏԱԿ

8. ՇՀՈՅԱՆ ՋԱՎԵՆ

9. ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱՐՈՆ

10. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՅԿ

11. ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ

12. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՏՈՄ

13. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՍՈՒՆ

14. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

Կ.Տ. *ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ՎԱԼՈԴՅԱ ԽԼՈՅԱՆ*

Հավելված N 1
Վարդենիսի քաղաքային համայնքի ավագանու
2012թ . դեկտեմբերի 27- ի N92-Ն որոշման

# ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

## ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

### Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Ֆինանսատնտեսական բաժին
2. Քաղաքաշինության և ճարտարապետության բաժին
3. Աշխատանքի և սոցիալական բաժին
4. Ներքին աուդիտի բաժին

### Առանձնացված ստորաբաժանում

5. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Վարդենիսի տարածքային բաժին

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ Ռ. ԽԼՈՅԱՆ

Հավելված 2

Վարդենիսի քաղաքային համայնքի ավագանու
2012թ. դեկտեմբերի 27 - ի N 92-Ն որոշման

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 49

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 238000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 144000 |
| 3 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 87000 |
| 4 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 87000 |
| 5 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 177000 |
| | *ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ* | | |
| 6 | Բաժնի պետ | 1 | 114000 |
| 7 | Բաժնի պետի տեղակալ | 1 | 79000 |
| 8 | Գլխավոր մասնագետ | 4 | 73500 |
| 9 | Առաջատար մասնագետ | 3 | 71000 |
| | *ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ* | | |
| 10 | Բաժնի պետ | 1 | 114000 |
| 11 | Գլխավոր մասնագետ | 1 | 73500 |
| 12 | Առաջատար մասնագետ | 5 | 71000 |
| | *ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱԺԻՆ* | | |
| 13 | Բաժնի պետ | 1 | 114000 |
| 14 | Գլխավոր մասնագետ | 1 | 73500 |
| 15 | Առաջատար մասնագետ | 3 | 71000 |
| | ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺԻՆ | | |
| 16 | Բաժնի պետ | 1 | 114000 |
| | ՔԿԱԳ ԲԱԺԻՆ | | |
| 17 | Բաժնի պետ | 1 | 114000 |
| | Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Զ Մ | | |
| 18 | Առաջին կարգի մասնագետ | 3 | 65500 |

## ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

| | | | |
|---|---|---|---|
| 19 | Տնտեսվար | 1 | 52000 |
| 20 | Գործավար | 1 | 80000 |
| 21 | Օպերատոր համակարգող | 1 | 64000 |
| 22 | Համակարգչային օպերատոր | 2 | 52000 |
| 23 | Վարորդ | 1 | 80000 |
| 24 | Հավաքարար | 2 | 45000 |
| 25 | Պահակ | 4 | 45000 |
| 26 | Մեխանիզատոր | 1 | 45000 |
| 27 | Բանվոր | 1 | 90000 |
| 28 | Էլեկտրիկ | 1 | 90000 |
| 29 | Հյուսն փականագործ | 1 | 60000 |
| 30 | Քաղաքային զուգարանի աշխատակից | 0.6 | 44300 |
| 31 | ԲԿԱԳ աշխատակից | 1 | 52000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ Ռ.ԽԼՈՅԱՆ

Հավելված 3
Վարդենիսի քաղաքային համայնքի ավագանու
2012թ. դեկտեմբերի 27 - ի N 92-Ն որոշման

ՎԱՐԴԵՆԻՍԻ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 16
2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 75000 |
| 2 | Գործավար | 1 | 44300 |
| 3 | Հաշվապահ | 1 | 52000 |
| 4 | Տնտեսվար | 1 | 44300 |
| 5 | Լաբարանտ | 2 | 44300 |
| 6 | Էլեկտրիկ | 1 | 44300 |
| 7 | Դասատու | 9.3 | 44300 |

ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 16
2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 75000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 52000 |
| 3 | Պահակ | 1 | 60000 |
| 4 | Դաստիարակ | 4 | 59100 |
| 5 | Դաստիարակի օգնական | 3 | 44300 |
| 6 | Երաժշտական դաստիարակ | 1 | 59100 |
| 7 | Գործավար | 1 | 44300 |
| 8 | Բուժքույր | 1 | 44300 |
| 9 | Խոհարար | 1 | 44300 |
| 10 | Խոհարարի օգնական | 1 | 44300 |

## ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 14
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 75000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 52000 |
| 3 | Պահակ | 1 | 44300 |
| 4 | Դաստիարակ | 3 | 59100 |
| 5 | Երաժշտական դաստիարակ | 1 | 44300 |
| 6 | Խոհարար | 1 | 44300 |
| 7 | Խոհարարի օգնական | 1 | 44300 |
| 8 | Դաստիարակի օգնական | 2.25 | 44300 |
| 9 | Գործավար | 1 | 44300 |
| 10 | Բուժքույր | 1 | 44300 |

## ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 10
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 75000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 52000 |
| 3 | Պահակ | 1 | 44300 |
| 4 | Դաստիարակ | 2 | 44300 |
| 5 | Երաժշտական դաստիարակ | 1 | 44300 |
| 6 | Դաստիարակի օգնական | 1.5 | 44300 |
| 7 | Խոհարար | 1 | 44300 |
| 8 | Բուժքույր | 1 | 44300 |

## Թիվ 1 ՄԵԴ ՀՈԱԿ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 32

2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 75000 |
| 2 | Փոխտնօրեն | 0.5 | 44300 |
| 3 | Ուսմասվար | 0.5 | 44300 |
| 4 | Հաշվապահ | 1 | 52000 |
| 5 | Գրադար | 1 | 44300 |
| 6 | Տնտեսվար | 1 | 44300 |
| 7 | Օպերատոր | 1 | 44300 |
| 8 | Գործավար | 1 | 44300 |
| 9 | Հավաքարար | 2 | 44300 |
| 10 | Պահակ | 2 | 44300 |
| 11 | Դասատու | 23.3 | 44300 |

## Թիվ 2 ՄԵԴ ՀՈԱԿ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 22

2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 75000 |
| 2 | Փոխտնօրեն | 0.5 | 44300 |
| 3 | Ուսմասվար | 0.5 | 44300 |
| 4 | Դաշնամուր լարող | 1 | 52000 |
| 5 | Հաշվապահ | 1 | 52000 |
| 6 | Գործավար | 1 | 44300 |
| 7 | Տնտեսվար պահակ | 1 | 45000 |
| 8 | Հանդերձապահ | 1 | 44300 |
| 9 | Հավաքարար | 1 | 52000 |
| 10 | Գրադարանավար | 1 | 44300 |
| 11 | Դասատու | 13.3 | 44300 |

## ՎԱՐԴԵՆԻՍԻ Մ<ԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ <ՈԱԿ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 21
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| h/h | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 75000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 52000 |
| 3 | Գեղմասվար | 1 | 52000 |
| 4 | Ավագ մեթոդիստ | 1 | 52000 |
| 5 | Մեթոդիստ | 2 | 51000 |
| 6 | Ժող.ստեղծ. խմբ. խմբավար | 1 | 51000 |
| 7 | Կուլտ. լուս. խմբավար | 1 | 51000 |
| 8 | Դիզայներ | 1 | 51000 |
| 9 | Մանկ. թատ. ղեկավար | 1 | 51000 |
| 10 | Պահակ | 4 | 51000 |
| 11 | Հավաքարար | 1.4 | 44300 |
| 12 | Բուժ քույր | 1 | 51000 |
| 13 | Այգեպան | 1 | 58000 |
| 14 | Խմբավար | 1 | 51000 |
| 15 | Երգիչ | 1 | 51000 |
| 16 | Հյուսն փականագործ | 1 | 58000 |
| 17 | Համակարգչային օպերատոր | 1 | 45000 |

## ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ ՀՈԱԿ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 17

2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 75000 |
| 2 | Փոխտնօրեն | 1 | 44300 |
| 3 | Ուսմասվար | 1 | 45000 |
| 4 | հաշվապահ | 1 | 52000 |
| 5 | Տնտեսվար | 1 | 44300 |
| 6 | Գործավար | 1 | 44300 |
| 7 | Օպերատոր | 1 | 44300 |
| 8 | Մարզիչ | 5 | 44300 |
| 9 | Հանդերձապահ | 1 | 44300 |
| 10 | Պահակ | 1 | 52000 |
| 11 | Հավաքարար | 1 | 44300 |
| 12 | Բուժքույր | 1 | 44300 |
| 13 | Մանկավարժ | 1 | 44300 |

## ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՈԱԿ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 12

2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 75000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 52000 |
| 3 | Գրադարանավար | 6.8 | 44300 |
| 4 | Հավաքարար | 0.75 | 44300 |

## ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՈԱԿ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 11
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 72000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 52000 |
| 3 | Ավագ գրադարանավար | 0.75 | 44300 |
| 4 | Գրադարանավար | 6.1 | 44300 |

## ԹԻՎ 1 ՄԱՐԶԱԴՊՐՈՑ ՀՈԱԿ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 12
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 75000 |
| 2 | Տեղակալ | 1 | 45000 |
| 3 | Հաշվապահ | 1 | 52000 |
| 4 | Ուսմասվար | 1 | 44300 |
| 5 | Գործավար | 1 | 44300 |
| 6 | Մարզիչ | 3 | 44300 |
| 7 | Հանդերձապահ | 1 | 44300 |
| 8 | Հավաքարար | 1 | 44300 |
| 9 | Պահակ | 1 | 44300 |
| 10 | Տնտեսվար | 1 | 44300 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ Ռ. ԽԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք*
*ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269) 2 2031 vardenismer@mail.ru*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2012թվականի N 91-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

Համայնքի տարածքում 2013 թ. հունվարի 1-ից սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ,

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված

նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 100 000 դրամ.

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 20000 դրամ.

51 . Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առևտրի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000  դրամ:

7. Համաքաղաքային կանոններին համապատասխան Վարդենիս քաղաքային համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 0 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

դ)  ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 4000 դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ: 11. Թույլատրել համայնքի ղեկավարին՝

1) որոշման 4-րդ կետով սահմանված տեղական տուրքը գանձել նաև ամսական և կիսամյակային պարբերականությամբ.

2) որոշման 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով սահմանված տեղական տուրքը գանձել նաև

ամսական պարբերականությամբ:

12. Համայնքի տարածքում 2010 թ. հունվարի 1-ից սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 դրամ.

2) համայնքի ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար յուրաքանչյուր մասնակցից՝ աճուրդի դրված ապրանքի մեկնարկային գնի 0.5 %-ի չափով բայց ոչ պակաս 1000 դրամը.

3)Մրցույթների մասնակցության համար `

ա.եթե գնման առարկայի գինը չի գերազանցում 1000000 դրամը 1000 դրամ,

բ. եթե գնման առարկայի գինը չի գերազանցում 90000000 դրամը 2000 դրամ,

գ.եթե գնման առարկայի գինը գերազանցում 90000000 դրամը 10000 դրամ

13. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2011 թ. դեկտեմբերի 28-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 110-Ն որոշումը:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՐԱՆՈՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ԽԼՈՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ԽՉԵՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ՄԱԼՈՅԱՆ ՀԱՅԿԱԶ
7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՏԱԿ
8. ՇՀՈՅԱՆ ՋԱՎԵՆ
9. ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱՐՈՆ
10. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՅԿ
11. ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՏՈՄ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՍՈՒՆ
14. ՍԵՅՐԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱԼՈՐՅԱ ԽԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք*
*ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269) 2 2031 vardenismer@mail.ru*

# ՈՐՈՇՈՒՄ

27 դեկտեմբերի 2012թվականի N 90-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ՀԵՐԹԱԿԱՆ 2-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 27-ի հերթական 2-րդ նիստի օրակարգը բաղկացած 5 հարցից:

Կողմ -14

Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՐԱՆՈՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ԽԼՈՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ԽՉԵՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ՄԱԼՈՅԱՆ ՀԱՅԿԱԶ
7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՏԱԿ
8. ՇՀՈՅԱՆ ԶԱՎԵՆ
9. ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱՐՈՆ
10. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՅԿ
11. ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՏՈՄ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՍՈՒՆ
14. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼՈԴՅԱ ԽԼՈՅԱՆ